**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ---------- 2026թ.** **N ----Ն**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԻՏՈԳՐԱԴՅԱՆ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տիտիգրադյան փողոցն (սկսվում է Այվազովսկու փողոցի կենտրոնական հատվածից, հասնում Խաղաղ Դոնի փողոց) անվանափոխել Պոդգորիցա անվամբ՝ «Պոդգորիցայի փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԻՏՈԳՐԱԴՅԱՆ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Պոդգորիցան հիմնադրվել է հին ժամանակներում՝ որպես հռոմեական բնակավայր Բիրզիմինիում, որը հետագայում հայտնի դարձավ Ռիբնիցա անունով: 15-րդ դարից քաղաքը կոչվում է Պոդգորիցա՝ «լեռան տակ գտնվող» նշանակությամբ:

1878 թվականին քաղաքը վերադարձվել է Չեռնոգորիային: 1945 թվականին դարձել է Չեռնոգորիայի մայրաքաղաքը, իսկ 1952–1992 թվականներին կոչվել է Տիտոգրադ:

1992 թվականին վերականգնվել է Պոդգորիցա անվանումը:

Երևանը և Պոդգորիցան (նախկին անվանումը՝ Տիտոգրադ) քույր քաղաքներ են դեռևս 1974 թվականից: Ներկայումս Երևանի և Պոդգորիցայի միջև նախատեսվում է ստորագրել համագործակցության նոր համաձայնագիր, որի նախագիծը համաձայնեցվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ:

Դեռևս 1984 թվականին Երևանի Էրեբունի բնակելի զանգվածի 4-րդ փողոցը վերանվանվել է «Տիտոգրադյան» անվամբ:

Հարցի վերաբերյալ առկա է ՀՀ արտաքին գործերի նախարարության դրական դիրքորոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիտոգրադը եղել է Չեռնոգորիայի Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքը Հարավսլավիայի կազմում (1946–1992 թթ.), իսկ ներկայումս անկախ Չեռնոգորիայի մայրաքաղաքը կրում է Պոդգորիցա անվանումը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 2-ի N 2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում է Տիտոգրադյան փողոցն անվանափոխել Պոդգորիցայի փողոց:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**